

տելու համար, կամ նոյն իսկ (այդ նեղութիւնները) մեղմելու համար դժուար կ'երեւայ (Պապին) ... ոչ ալ կրնանք որեւէ ուրիշ օգնութիւն տալ...» Պապը միայն կրնայ «կարեկցութեան» մասին խօսիլ, ասիկա օգնութիւն մըն էր որ գործնականապէս բան մը չէր արժէր թէ՛ Յակոբ Կաթողիկոսին եւ թէ՛ տառապող Հայ ժողովուրդին համար: Նոյն իսկ այս «կարեկցութեան» փոխարէն Հռովմի Սըրբազան Պապը այն ատեն տարապայման կերպով պահանջկոտ կ'երեւայ բացարձակ հպատակութիւն պահանջելով Հայոց եկեղեցիէն:

Գալով Լեւոն Քահանայապետը նըզովելու յիշատակութեան ջնջման, ատիկա կը վերաբերի «Ով Հրաշալի» Շարականին այն տան ուր կ'ըսուի ի մէջ այլոց «... որք միանգամ ուրացան զտէրն ի Քաղկեդոնի: Գեղեցիկ շառաւիղ յարմատոց սրբոց Հարցն վերաբուսեալ ծաղիկ հաւատոյ, մեծ վկայն Քրիստոսի Սուրբն Դիոսկորոս, ոչ հաւանեալ անարէն ժողովոյն նզովեաց ըզլեւոն եւ զտոմարն իւր պիղծ...»: («Կանոն Սրբոց Հայրապետաց» խորագրով, որուն երբեմն կը հանդիպինք մեր գրչագիրներուն մէջ ջնջուած կամ պատուած:)

Այս տողերը իրապէս քար գայթակղութեան եւ ահազին վէճերու պատճառ եղած են: Յակոբ Դ. Կաթողիկոսին այս վէճի խնդիր տողերուն շարականին մէջն սրբելը լոկ բարեկամական ցոյց մըն էր քոյր եկեղեցիի մը հանդէպ, մանաւանդ այնքան պատճառներ կային Հռովմի Աթոռին հետ բարեւոք յարաբերութիւն մշակելու համար: Տպագրութեան հարցը, Հայ եւ նամանաւանդ Չուղայեցի վաճառականներուն երթեկը Եւրոպա, Լեհահայոց Նիկոլեան տխուր եւ ընդվզգեցուցիչ խնդիրը: Անոնք իսկ պիտի բաւէին որ «Ով Հրաշալիէն» սրբուին այդ խրաչեցուցիչ տողերը: Սակայն ասիկա լատինամերձութիւն կամ երկարնակութիւն ընդունիլ կարծելը ճիշտ չէ:

Գանք Յակոբ Կաթողիկոսին Հռովմ երթալուն: Ատիկա որոշապէս ծագած կ'երեւայ իր 28 Սեպտ. 1661ի նամակին այն լոկ քաղաքավարական ցանկութե-

նէն «զի աղաչեսցէ զբարերան Աստուած, զի զիս անարժանս արժանի արասցէ մարմնաւոր աջօք հայել ի Սրբութիւնդ Ձեր (Պապն)»: Ատիկա ալ կը նմանի անոր որ երբեմն զիրար յարգող մարդիկ բարեկամութենէ մղեալ կը զրեն. «Տար Աստուած որ օր մը զիրար տեսնայինք» կամ ասոր նման յարգալից, անմեղ, արտայայտութիւն: Ատիկա մատի փաթթոց է եղած թէ՛ Յակոբ Դ.ի թշնամիներուն եւ թէ՛ զինք լատինացնել ցանկացողներուն: Առանց երկար բարակ իրականութիւնը պրպտելու նոյն իսկ օտար եւ հայ գրողներ կրկնած են, առանց աղբիւր նշանակելու, եւ արձագանդ եղած են վերի նամակին այդ անմեղ նախադասութեան անուղղակի կերպով: Ատիկա կրկնուած է երկար շրջան մը: Առիթ պիտի ունենանք այս մասին ատեն ատեն խօսելու: Ինձի ծանօթ հնագոյն վկայութիւնը Յակոբ Կաթողիկոսին Հռովմ երթալու փափաքին Հէլիոպոլսոյ Գերապայճառին 1663 Յունուար 23-էն մեզի հասած վրկայութիւնն է, արձագանդը անտարակոյս Յակոբ Դ.ի Հռովմ զրկուած 28 Սեպտ. 1661 թուակիր նամակին քաղաքավարական արտայայտութեան:

1665-ին Յակոբ Դ. ի Իզմիր երթալուն առթիւ իր թշնամիները դարձեալ մէջտեղ հանեցին անոր Հռովմ երթալու ստաբանութիւնը: Ըսինք թէ ոչ մէկ ապացոյց կայ Յակոբ Դ.ի երբեւիցէ նման ցանկութիւն մը ունեցած ըլլալուն: Ատիկա աւելի անոր գէմ եղած հակառակութենէն կը ծագէր, շարակամօրէն Յակոբ Դ.ի թշնամիներէն տարածուած: Անոնց ցանկութիւնն էր Թուրքերուն կասկածն հրաւիրել Կաթողիկոսին վրայ եւ այդպէսով շնորհագուրկ ընել եւ նոյնիսկ Կաթողիկոսը պատժել տալ անիրաւ կերպով: Թուրքերը բնական է եթէ հաւատային այս մատնութեան ոչ միայն կաթողիկոսը կը բանտարկէին, այլ շատ հաւանաբար զայն կ'ըսպանէին ալ: Յակոբ Դ.ի թշնամիները անոր կը վերագրէին լատինամերձութենէ աւելի Հռովմ փախչելով Հայկ. ազատագրութեան շարժում մը սկսելու միտքը, որ մահապատիժի արժանի ամբաստանութիւն էր: Հոգ չէ թէ